

ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2009 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ  
ԱՌԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՏԵՓԱՆԱԿԵՐԸ

2010թ.

## **Հ Ա Ը Վ Ե Տ Վ ՈՒԹ Յ Յ ՈՒՆ**

### **Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 2009 թվականին կատարված աշխատանքների մասին**

2009 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրականացվող ֆինանսատնտեսական քաղաքականությունը հիմնականում ուղղված էր մակրոտնտեսական կայունության ապահովմանը, տնտեսական աճի բարձր տեմպերի պահպանմանը՝ զուգահեռաբար իրականացնելով հակածգնաժամային հետևողական քաղաքականություն:

Չնայած գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությանը՝ 2009 թվականի համախառն ներքին արդյունքը նախնական տվյալներով կկազմի շուրջ 101.6 մլրդ դրամ՝ ապահովելով իրական աճի բարձր տեմպ 13.2 տոկոսի չափով: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն տարվա արդյունքներով կկազմի 717.3 հազ. դրամ՝ 2008 թվականի 623.1 հազ. դրամի դիմաց:

Ցուցանիշը	2004	2005	2006	2007	2008	2009*
Անվանական ՀՆԱ (մլն դրամ)	42830	51379	61886	70791	87148	101600
ՀՆԱ-ի իրական աճ (%)	18.2	14.1	10.1	8.8	14.3	13.2
ՀՆԱ 1 շնչի հաշվով (հազ. դրամ)	312.2	373.1	449.4	510.0	623.1	717.3

\* ) նախնական տվյալներով

Պետական բյուջեի եկամուտների ծրագրված ցուցանիշները ամբողջությամբ ապահովվել են՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 14.2 տոկոսով, ինչը հնարավորություն է ստեղծել ժամանակին և ամբողջությամբ կատարել 2009 թվականի պետական բյուջեով ստանձնված ծախսային և առաջին հերթին՝ սոցիալական պարտավորությունները: Հաշվետու տարում հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 13685.4 մլն դրամ՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 6.2 տոկոսով: 2009 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 54965.3 մլն դրամ, կամ 2008 թվականի նկատմամբ 11.8 տոկոսով ավելի:

2009 թվականի ընթացքում ԼՂՀ ֆինանսների նախարարության գործունեությունը ուղղված է եղել ԼՂՀ օրենքներով, կառավարության որոշումներով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ վերապահված գործառույթների ու լիազորությունների իրականացմանը, ինչպես նաև ԼՂՀ կառավարության գործունեության և այլ աշխատանքային ծրագրերի կատարումն ապահովող միջոցառումների իրագործմանը: Նշված ուղղություններով կատարված աշխատանքները հիմնականում բնութագրվում են հետևյալ կերպ:

#### **Բյուջետային քաղաքականության ոլորտում.**

Հաշվետու ժամանակաշրջանում բյուջետային քաղաքականությունը նպատակառողիկ է եղել բնակչության սոցիալական հարցերի լուծմանը, կենսամակարդակի բարձրացմանը,

պետական միջոցների արդյունավետ և նպատակային ծրագրավորման գործընթացների իրականացմանը:

Համաձայն «ԼՂՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի և «ԼՂՀ 2009 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ԼՂՀ կառավարության որոշման դրույթների՝ կատարվել են աշխատանքներ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների, բյուջետային հիմնարկությունների և կազմակերպությունների կողմից ներկայացված պահպանման ծախսերի նախահաշվների, հաստիքացուցակների, տարիքիկացիաների, ինչպես նաև առանձին ծառայություններից օգտվելու համար կնքված պայմանագրերի ստուգման ուղղությամբ:

Ընդունվել, ստուգվել և ընդհանրացվել են համայնքների ավագանիների կողմից հաստատված 2009 թվականի համայնքային բյուջեները՝ ըստ եռամսյակային համամասնությունների:

Ուսումնասիրվել, ստուգվել և համաձայնություն է տրվել պետական պատվերի և վճարովի ծառայությունների գծով կիրառվող նորմատիվների և միջինացված գների վերաբերյալ:

Հաշվի առնելով համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող ճգնաժամային երևոյթներով պայմանավորված հանրապետության տնտեսությունում ոչ բնական՝ դժվար կանխատեսվող զարգացումները, որոնց հետևանքով պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման գործընթացը կորցնում է ի սկզբանե իր մեջ դրված իմաստն ու արդիականությունը՝ նախարարության կողմից մշակվել է «ԼՂՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծի կազմման գործընթացի առանձնահատկությունների մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը, որն ընդունվել է ԼՂՀ Ազգային Ժողովի կողմից և համաձայն որի ԼՂՀ 2010-2012 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը չի կազմվել:

ԼՂՀ վարչապետի 2009 թվականի հուլիսի 9-ի «ԼՂՀ 2010 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 137-Ն որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն կազմակերպվել են ԼՂՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծի կազմման աշխատանքները, մշակվել են մեթոդական ցուցումներ՝ նպատակ ունենալով օժանդակել ԼՂՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմիններին՝ ԼՂՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացի շրջանակներում իրենց բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման ու ԼՂՀ ֆինանսների նախարարություն ներկայացման գործում:

Վերոնշյալ որոշման պահանջների համաձայն մշակվել են նաև 2010 թվականի համայնքների բյուջեների նախագծերի կազմման և ԼՂՀ պետական բյուջեից հատկացումներ ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և ներկայացման պարտադիր բնույթի մեթոդական ցուցումները և խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցները, բնապահպանական և բնօգտագործման վճարների, պետական տուրքերի և այլ եկամուտների գծով ԼՂՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրման ննթակա բյուջետային

մուտքերի գումարների կանխատեսումների կազմման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումները:

Ուսումնասիրվել և ընդհանրացվել են.

ա/ պետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված 2010 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը,

թ/ շրջանների տարածքում տեղաբաշխված համայնքներից, Ստեփանակերտի քաղաքապետարանից ստացված LՂՀ պետական բյուջեից դուտացիա ստանալու 2010 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը,

զ/ LՂՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված բնապահպանական և բնօգտագործման վճարների, պետական տուրքերի և այլ եկամուտների գծով LՂՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարների մասին տեղեկությունները:

Մշակվել է «LՂՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» LՂՀ օրենքի նախագիծը և նախագծի բացատրագիրը ու ներկայացվել LՂՀ կառավարության քննարկմանը: Ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել LՂՀ Ազգային Ժողովի մշտական հանձնաժողովներում, պատգամավորական խմբակցություններում «LՂՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» LՂՀ օրենքի նախագծի քննարկումներին:

Համաձայն «LՂՀ բյուջետային համակարգի մասին» LՂՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների՝ մշակվել է LՂՀ 2010 թվականի պետական բյուջեի ծախսերի տարեկան հատկացումների կատարման եռամսյակային (աճողական) համամասնությունները (ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի ու դրանք իրականացնող մարմինների) հաստատող «LՂՀ 2010 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» որոշման նախագիծը:

Հաշվետու տարվա ընթացքում կատարվել է LՂՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված LՂՀ կառավարության պահուստային ֆոնդից և այլ կենտրոնացված ֆոնդերից LՂՀ կառավարության որոշումներով իրականացվող հատկացումների, օրենսդրությամբ սահմանված կարգով LՂՀ կառավարության որոշումներով բյուջետային միջոցների վերաբաշխումների, ինչպես նաև 2009 թվականին տրամադրված բյուջետային երաշխիքների հաշվառումը:

Մշակվել են պետական բյուջեի կազմման և կատարման հարցերին առնչվող LՂՀ օրենքների, LՂՀ կառավարության և LՂՀ վարչապետի որոշումների նախագծեր, ինչպես նաև նախարարություններից ու գերատեսչություններից ստացված համանման նախագծերի կապակցությամբ տրվել են համապատասխան առաջարկություններ:

50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերությունների տրամադրության տակ մնացած շահույթի բաշխման

նպատակով ուսումնասիրվել են պետական լիազորված մարմիններից ստացված առաջարկությունները և տրվել են համապատասխան եզրակացություններ գուտ շահույթի օգտագործման ուղղությամբ:

ԼՂՀ ֆինանսների նախարարության ամենօրյա ուշադրության և հսկողության կենտրոնում են գտնվել արտաքյութետային մուտքերի հավաքագրման, հաշվառման և հրատապ ծրագրերի իրականացմանը նպատակառողված ֆինանսավորման գործընթացները:

ԼՂՀ կառավարության մարդասիրական օգնության արտաքյութետային հաշվում 2009 թվականին տարբեր աղբյուրներից առանձին ծրագրերի իրականացման համար ստացվել է 2702.0 հազ. ԱՄՆ դոլար: Ստացված միջոցներից և նախորդ տարիների մնացորդից նույն ժամանակահատվածում նպատակային կարգով ծախսվել է 2394.0 հազ. ԱՄՆ դոլար:

Այստեղ կարևորվում է այնպիսի ծրագրերի ֆինանսավորումը, ինչպիսիք են.

- կրթության բնագավառում՝ բարերար Արա Աբրահամյանի կողմից Ստեփանակերտ քաղաքի թիվ 6 դպրոցի շինարարության նպատակով տրամադրված գումարներից՝ 303.0 հազ. ԱՄՆ դոլար, և «Բեյզ Մեթլս» ՓԲԸ-ի կողմից Ստեփանակերտ քաղաքի թիվ 2 մանկապարտեզի վերանորոգման նպատակով տրամադրված գումարներից՝ 276.4 հազ. ԱՄՆ դոլար,

- առողջապահության համակարգում՝ «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ի կողմից Մարտակերտ քաղաքի հիվանդանոցի վերակառուցման, Ստեփանակերտ քաղաքի մանկական հիվանդանոցի տարածքի բարեկարգման, բժշկական տարբեր սարքավորումների ձեռքբերման և այլ նպատակներով տրամադրված գումարներից՝ 1568.4 հազ. ԱՄՆ դոլար,

- «Լուղինգ» ՍՊԸ-ի կողմից ԼՂՀ պատերազմի առաջին խմբի հաշմանդամ ազատամարտիկների համար ձեռքի կառավարման ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով տրամադրված գումարներից՝ 64.6 հազ. ԱՄՆ դոլար,

- Մարտակերտ քաղաքի փողոցների փոսային վերանորոգման աշխատանքների համար՝ 44.3 հազ. ԱՄՆ դոլար,

- Լիբանանի Արցախֆոնդի կողմից վերաբնակեցվող գյուղերի վերանորոգման նպատակով տրամադրված գումարներից «Նոր կյանք - նոր հույս» ծրագրին՝ 48.9 հազ. ԱՄՆ դոլար:

ԼՂՀ գոհված ազատամարտիկների, հաշմանդամ և երկկողմանի ծնողագորկ երեխաների օգնության տրամադրման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ստացվել և ծախսվել է 11.8 մլն դրամ:

Մարդասիրական օգնության արտաքյութետային հաշվից կատարվող ֆինանսական հոսքերի մասին պատրաստվել և հրապարակվել են ամենամսյա հաշվետվություններ:

### **Գաճային համակարգի ուրուսում**

2009 թվականին գաճային պատական համակարգի աշխատանքները ուղղված են եղել ինչպես ԼՂՀ պետական բյուջեի համաշակի և սահուն կատարման այլահովմանը, այնպես էլ համակարգի գարգացման և կատարելագործման համար անհրաժեշտ գործառությների իրականացմանը:

Ամբողջ ծավալով և առանց էական ուշացումների վճարվել են աշխատավարձի գծով նախատեսված միջոցները, ֆինանսավորվել են սպայական անձնակազմի և շարքային զինծառայողների սոցիալական կենսաթոշակները, անհատական թոշակները, առանձին խմբերի երեխաներին տրվող նպաստները, ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների և այլ սոցիալական ծրագրերի իրականացման ծախսերը:

Տարվա ընթացքում գանձապետական համակարգը սպասարկել է 429 իրավաբանական անձանց (պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, բյուջետային հիմնարկներ, պետական պատվերով աշխատող ՊՈԱԿ-ներ և այլն) 5558 գանձապետական հաշիվներով, որից 1460՝ պետական բյուջեի, 3954՝ համայնքային բյուջեների, 144՝ արտաքյուջետային գործառնությունների իրականացման համար:

2009 թվականին գանձապետական համակարգի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

➤ ընդունվել են ԼՂՀ նախարարությունների, գերատեսչությունների, բյուջետային հիմնարկների, ՊՈԱԿ-ների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող բյուջետային ծախսերի ֆինանսավորման հայտերը, ստուգվել և հիմնավոր ճանաչվելու դեպքում իրականացվել է ֆինանսավորումը.

➤ պետական բյուջեի ծախսերի դրամարկղային կատարումն իրականացնելու նպատակով ապահովվել է առկա դրամարկղային միջոցների բաշխումը կենտրոնական գանձապետարանից տեղական գանձապետական բաժիններին և վերահսկվել է վերջիններիս կողմից կատարումը.

➤ ապահովվել է Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ շրջանների համայնքների, բյուջետային հիմնարկությունների հաշիվների ֆինանսավորումը և ծախսերի իրականացումը.

➤ անհրաժեշտության դեպքում նախարարությունների և գերատեսչությունների գրությունների հիման վրա ճշտումներ են իրականացվել նախահաշիվների հողվածներում: Տարվա ընթացքում կենտրոնական գանձապետարան մուտքագրվել է 395 գրություն՝ ծախսերի հողվածային փոփոխություն կատարելու խնդրանքով, որոնցից բավարարվել է 277-ը, իսկ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից պետական բյուջե վճարած պետական տուրքի վերադարձման (համապատասխան մարմինների կողմից տարբեր գործարքների չիրականացման, ավել գումարի վճարման, գործի վարույթի կարճման և այլ պատճառներով) խնդրանքով գանձապետարան մուտք գործած 90 դիմումներից և գրություններից բավարարվել են 88-ը.

➤ ԼՂՀ պետական կառավարման մարմինների 53 գրության հիման վրա նրանց կողմից ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերով հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաբերների և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար պետական բյուջեից իրականացվել են «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված վճարումները.

➤ պատրաստվել է ամենօրյա, շաբաթական և ամսական տեղեկություններ պետական բյուջեի եկամուտների, բյուջետային հիմնարկություններին և ՊՈԱԿ-ներին ֆինանսավորման և կատարված ծախսերի մասին.

➤ ապահովել է բյուջետային հիմնարկությունների գանձապետական հաշիվներով ամենօրյա գործառնությունների ճիշտ և նպատակային իրականացումը.

➤ կազմվել է ամենամսյա տեղեկանք ԼՂՀ պետական բյուջեի կատարողականի մասին ըստ ֆինանսավորման (տնտեսագիտական և գործառնական դասակարգմանք) և սահմանված ժամկետում ներկայացվել է ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությանը.

➤ ամենօրյա վերահսկողություն է իրականացվել կենտրոնական գանձապետարանի և բոլոր ՏԳԲ-ների գանձապետական միասնական հաշվով կատարվող գործառնությունների ճշտության և նպատակայնության ուղղությամբ.

➤ իրականացվել է պետական բյուջեի եկամուտների (ըստ հարկատեսակների) և ծախսերի (ըստ խմբերի, ենթախմբերի, ծրագրերի և հոդվածների) հաշվառումը.

➤ պետական և համայնքային բյուջեների կատարման ընթացքի դիտարկումների հիման վրա վերլուծության արդյունքներով տեղեկություններ են պատրաստվել և ներկայացվել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ օպերատիվ միջամտություն ու որոշումներ կայացնելու համար.

➤ պետական և համայնքային բյուջեների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ու պետական ոչ առևտրային կազմակերպությունների ծախսերի կատարման եռամսյակային և տարեկան հաշվետվությունները ժամանակին և ճիշտ ներկայացման համար տարվել են նախապատրաստական աշխատանքներ՝ ապահովել են հաշվետվությունների ներկայացման անհրաժեշտ ձևերով, տրվել են հաշվետվությունների կազմման հետ կապված մեթոդական ցուցումներ ու պարզաբանումներ.

➤ հսկողություն է սահմանվել 50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերությունների կողմից տնտեսական գործունեության արդյունքում մնացորդային շահույթից շահութաբաժինները պետական բյուջե փոխանցման ուղղությամբ.

➤ նախարարություններից, գերատեսչություններից, բյուջետային այլ հիմնարկություններից, ՏԳԲ-ներից, պետական ոչ առևտրային կազմակերպություններից և հասարակական կազմակերպություններից ընդունվել են 2008 թվականի պետական բյուջեի, 2009 թվականի առաջին եռամսյակի, առաջին կիսամյակի և 9 ամսվա կատարման հաշվետվությունները, որոնց հիման վրա կազմվել են ԼՂՀ պետական և համայնքային բյուջեների ամփոփ հաշվետվությունները.

➤ ԼՂՀ կառավարությանը ներկայացնելու համար պատրաստվել է տեղեկատվություն համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի ԼՂՀ պետական բյուջեի կատարման մասին.

➤ կազմվել են «ԼՂՀ 2008 թվականի պետական բյուջեի կատարման մասին», «ԼՂՀ 2009 թվականի պետական բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին», «ԼՂՀ 2009 թվականի պետական բյուջեի առաջին կիսամյակի կատարման մասին» և «ԼՂՀ 2009 թվականի պետական բյուջեի 9 ամսվա կատարման մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագծերը և

սահմանված ժամկետում ներկայացվել ԼՂՀ կառավարությանը.

➤ մասնակցություն է ապահովվել ԼՂՀ Ազգային ժողովի մշտական գործող հանձնաժողովներում ԼՂՀ 2008 թվականի տարեկան և 2009 թվականի առաջին եռամյակի, առաջին կիսամյակի և 9 ամսվա պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունների քննարկումներին.

➤ յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածից հետո ԼՂՀ պետական բյուջեի կատարման վերլուծության ամփոփ բնութագիրը ներկայացվել է «Ազատ Արցախ» թերթին հրապարակման համար.

➤ 2009 թվականի դեկտեմբերի 17-ին հրավիրվել է խորհրդակցություն շրջանների գանձապետական բաժինների պետերի մասնակցությամբ, որտեղ քննարկվել են դեկտեմբերի 15-ի դրությամբ պետական և համայնքային բյուջեների կատարման, ինչպես նաև մինչև տարեվերջ սպասվելիք համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի արդյունքները.

➤ կազմվել է կենտրոնական գանձապետարանի գործառնական բաժնում 2010 թվականի հունվարի 1-ից գործողության մեջ դրվող պետական բյուջեի եկամուտների հաշվառման հաշիվների ցանկը:

### **Ֆինանսական վերահսկողության ոլորտում**

Ֆինանսական վերահսկողության շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում լրիվ կամ մասնակի ստուգումներ են իրականացվել հանրապետության տարածքում գործող 105 տնտեսվարող սուբյեկտներում և բյուջետային հիմնարկություններում, այդ թվում՝ 20 բյուջետային հիմնարկներում, 43 պետական ոչ առևտրային կազմակերպություններում, 22 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում, 4 ոչ պետական ձեռնարկություններում, 8 հասարակական կազմակերպություններում, 4 քաղաքային և 4 գյուղական համայնքներում:

Ստուգումների արդյունքում հայտնաբերվել և հաշվարկվել է շուրջ 81134.6 հազ. դրամի անօրեն ծախսումներ: Պետական բյուջե լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 53190.8 հազ. դրամ, համայնքային բյուջե՝ 4836.9 հազ. դրամ, իսկ ձեռնարկության հաշվին վերականգնման ենթակա գումարները՝ 23106.9 հազ. դրամ:


Ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասուրդները կազմել են 207.0 հազ. դրամ, ավելցուկը՝ 20503.7 հազ. դրամ:

Լրացուցիչ հաշվարկված 81134.6 հազ. դրամի ամօրինական ծախսերից, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասուրդներից ու ավելցուկներից վերականգնվել/վերածևակերպվել է 37965.1 հազ. դրամ, որից պետական բյուջե՝ 16422.1 հազ. դրամ, համայնքային բյուջե՝ 4601.1 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 16941.9 հազ. դրամ:

Ապառքի գումարները կազմել են 43169.5 հազ. դրամ, որից պետական բյուջեին՝ 36768.7 հազ. դրամ, համայնքային բյուջեին՝ 235.8 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 6165.0 հազ. դրամ:

Նախորդ՝ 2008 թվականին կատարված ստուգումների արդյունքներով լրացուցիչ հաշվարկված գումարների գծով ապառքներից 2009 թվականին վերականգնվել/վերաձևակերպվել է 50212.5 հազ. դրամ, որից՝ պետական բյուջե՝ 32755.1 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 17457.4 հազ. դրամ:

Ընդամենը 2009 թվականին պետական բյուջե է վերականգնվել 49177.2 հազ. դրամ, որից 2009 թվականի արդյունքներով՝ 16422.1 հազ. դրամ, 2008 թվականի ապառքի գումարներից՝ 32755.1 հազ. դրամ: Համայնքային բյուջե է վերականգնվել 2009 թվականի արդյունքներով 4601.1 հազ. դրամ: Ձեռնարկության հաշվին է վերականգնվել 34399.3 հազ. դրամ, որից՝ 2009 թվականի արդյունքներով՝ 16941.9 հազ. դրամ, 2008 թվականի ապառքի գումարներից՝ 17457.4 հազ. դրամ (գծապատկեր 1):



**Գծապատկեր 1.** 2009 թվականի ընթացքում կատարված ստուգումների արդյունքում հայտնաբերված անօրեն ծախսումների և վերականգնված գումարների չափերը (հազ. դրամ)

Ստուգման արդյունքներով 9 հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԼՂՀ ոստիկանություն և 5 հիմնարկ-ձեռնարկության նյութերը՝ ԼՂՀ Գլխավոր դատախազություն:

### **Հաշվապահական հաշվառման և առողիտի կարգավորման ոլորտում.**

Հաշվապահական հաշվառման և առողիտի կարգավորման ու մեթոդաբանության ոլորտում ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից 2009 թվականին կատարված աշխատանքներն ուղղված են եղել հաշվապահական հաշվառումը և առողիտորական գործունեությունը կարգավորող իրավական դաշտի կատարելագործմանը, հաշվապահական հաշվառման ոլորտում մեթոդական օժանդակության ցուցաբերմանը, հաշվապահների և առողիտորների որակավորման բննությունների անցկացման համար պայմանների ստեղծմանը:

Հաշվետու տարում ԼՂՀ ֆինանսների նախարարի հրամանով ստեղծվել է առողիտի, հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների մեթոդաբանության մշակման աշխատանքները համակարգող հանձնաժողով, որը հաշվետու ժամանակաշրջանում

իրականացրել է հետևյալ աշխատանքները՝

- հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների մեթոդաբանության մշակման աշխատանքների համակարգում՝ նշված ոլորտները կարգավորող իրավական ակտերի դրույթների պարզաբանումների վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստմամբ,
- հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան դիմողների հարցերի քննարկում և դրանց վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում:
- հաշվապահների հետ աշխատանքների (դասընթացների, սեմինար-խորհրդակցությունների և ուսումնասիրությունների) կազմակերպում և այդ նպատակով ծրագրերում ներառվող թեմաների և ուղեցույցների վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում:

Բյուջետային նոր դասակարգման ներդրման հետ կապված համապատասխան լրացումներ և փոփոխություններ են կատարվել պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ ծրագրային ցուցանիշների ներկայացման, ինչպես նաև այդ գործունեության վերաբերյալ հաշվետվությունների առանձին տեսակների կազմման, ամփոփման ու ներկայացման հրահանգում:

Հաշվապահների և առողջապահների որակավորման գործընթացը պատշաճ կերպով կազմակերպելու նպատակով.

- ստեղծվել է առողջապահների որակավորման քննության թեստերը պատահականության սկզբունքով կազմող համակարգչային ծրագիր, որում գետեղվել են առողջապահների որակավորման քննությունների հարցերը,

- մշակվել է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահների ատեսատավորման հարցաշարը:

Տարվա ընթացքում կազմակերպվել է հաշվապահների որակավորման չորս քննություն, որոնց արդյունքներով համապատասխան անցողիկ միավորներ հավաքած անձանց տրվել է որակավորված հաշվապահի երկու վկայական:

Հաշվապահական հաշվառումը կարգավորող նորմատիվ իրավական ակտերից ելնելով՝ կազմվել են ուղեցույցներ և տրամադրվել պետական հատվածի հաշվապահներին:

Կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ ԼՂՀ առողջապահության նախարարության համակարգի ընկերությունների և ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահների հետ՝ նախապես ներկայացված հարցերի վերաբերյալ:

Ստեփանակերտ քաղաքի, Շահումյանի, Մարտունու, Մարտակերտի և Հաղորդի շրջանների պետական կառավարչական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ընկերությունների հաշվապահների հետ անցկացվել են սեմինար-խորհրդակցություններ: Իրականացվել են հաշվապահական հաշվառման դրվագի ուսումնասիրություններ ԼՂՀ

Մարտունու շրջանի 35, Մարտակերտի շրջանի 44 և Հաղորդի շրջանի 30 համայնքներում, որոնց ընթացքում տրվել են մեթոդաբանական ցուցումներ:

Սեմինար-խորհրդակցությունների և ուսումնասիրությունների ընթացքում հաշվապահներին պարզաբանվել են նաև բազմաթիվ հարցեր՝ ելնելով գործող ԼՂՀ օրենքների, կառավարության որոշումների, ԼՂՀ ֆինանսների նախարարի հրամաններով սահմանված կարգերի, հաշվապահական ստանդարտների և հաշվային պլանի պահանջներից:

Հաշվապահական հաշվառման դերի և կարևորության, ինչպես նաև ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվապահական հաշվառման մեթոդաբանության ոլորտում կատարված աշխատանքների մասին «Ազատ Արցախ» թերթում հրապարակվել է համապատասխան տեղեկատվություն:

ԼՂՀ կրթության և գիտության ու ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարությունների հետ համատեղ ուսումնասիրվել, քննարկվել և պարզաբանվել են ուսումնական արձակուրդի տրամադրման և վճարման հետ կապված հարցադրումները:

Քննարկվել, մշակվել և տրվել են պարզաբանումներ հիմնարկ-ձեռնարկությունների կողմից ներկայացված հարցերի վերաբերյալ:

ԼՂՀ ներդրումային գրավչության ուսումնասիրման և գործարար առաջարկությունների մշակման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 29-ի «Գործարար ծրագրերի անվանացանկը, ժամանակացույցը և աշխատանքային խմբերի կազմերը հաստատելու մասին» թիվ 1 որոշման շրջանակներում մշակվել են հաշվապահական և առողջապահական ծառայությունների մատուցմանը վերաբերվող չափանիշներ և օրենսդրական պահանջներ:

### **Գնումների գործընթացի կարգավորման ոլորտում.**

«Գնումների մասին» ԼՂՀ օրենքի համաձայն ԼՂՀ ֆինանսների նախարարությունը հանդիսանում է պետական կառավարման մարմինների, պետական հիմնարկների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կատարվող գնումների գործընթացի կարգավորումը և համակարգումն իրականացնող լիազոր մարմին: 2009 թվականի ընթացքում գնումների գործընթացի կարգավորման ոլորտում ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից.

- ստուգվել և եզրակացություն է տրվել մոտ 505 գնման ընթացակարգի արձանագրություններին,

- ուսումնասիրվել և պատասխան է տրվել պետության կարիքների համար 2009 թվականին իրականացվող գնումների անվանացանկում փոփոխություն կատարելու վերաբերյալ պետական մարմինների կողմից ներկայացված 75 առաջարկություններին, ինչպես նաև կնքված պայմանագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ 93 գրություններին,

- գնումների ընթացակարգերի կազմակերպման և անցկացման գործընթացի շրջանակներում պետական մարմինների կողմից ներկայացրած հարցադրումների վերաբերյալ տրվել են առաջարկություններ և մեթոդական ցուցումներ,

- պատրաստվել և ամփոփվել են գնումների պաշտոնական տեղեկագրերում հրապարակման ենթակա նյութերը, հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրի 6 համար, որից 3-ը՝ Էլեկտրոնային:

- ստուգվել և ամփոփվել են պետական մարմինների կողմից ներկայացված **LՂՀ** պետական կառավարման մարմինների կարիքների համար 2010 թվականի գնումների անվանացանկերը:

Համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով համապատասխան փոփոխություններ կատարվեցին պետական գնումների գործընթացը կարգավորող օրենսդրության մեջ: Մշակվեց և **LՂՀ** Ազգային Ժողովի ընդունմանը ներկայացվեց «Գնումների մասին» **LՂՀ** օրենքում փոփոխություններ կատարելու մասին» **LՂՀ** օրենքի նախագիծը, որը հնարավություն տվեց պատվիրատուններին գնումներ իրականացնել պարբերական մրցույթով կնքված պայմանագրերով սահմանված գներից ցածր գներով: Մշակվել և **LՂՀ** կառավարության կողմից ընդունվել են գնումների գործընթացը կարգավորող՝ օրենքի կիրարկումն ապահովող թվով 5 կարգեր, որոնցով ամբողջականացվեց «Գնումների մասին» **LՂՀ** օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական դաշտը:

Առաջին անգամ գործուն քայլեր ձեռնարկվեցին Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման առումով, և գնումների պաշտոնական տեղեկագիրը սկսեց հրատարակվել Էլեկտրոնային եղանակով՝ ինտերնետային կայքում, ինչը գնումներին վերաբերվող տեղեկատվությունը հասանելի դարձրեց նաև **LՂՀ**-ից դուրս գործող սուբյեկտներին:

Ընդհանուր առմանը, 2009 թվականի ընթացքում մրցակցային իիմունքներով կատարվել է մոտ 4378.0 մլն դրամի գնումներ՝ ապահովելով հատկացված միջոցների տնտեսում 173.2 մլն դրամի կամ հատկացված գումարի 4 տոկոսի չափով:

### **Փողերի լվացման և ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում.**

Լեռնային Դարարաղի Հանրապետությունում փողերի լվացման և ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի լիազորված մարմնի գործառույթը օրենքով դրված է **LՂՀ** ֆինանսների նախարարության վրա, և այդ նպատակով **LՂՀ** ֆինանսների նախարարության կազմում գործում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանում՝ ֆինանսական դիտարկումների բաժին:

Հաշվետու տարում մշակվել և ընդունվել են տվյալ ոլորտը կարգավորող՝ **LՂՀ** ֆինանսների նախարարի նորմատիվ բնույթի հետևյալ հրամանները.

- «Ոիելտորական գործունեություն իրականացնող անձանց կողմից կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձեռն, կարգը և ժամկետները հաստատելու մասին».

- «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին ներկայացվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարության օրինակելի ձեռն, կարգը և ժամկետները հաստատելու մասին».

- «Իրավաբանական անձանց գրանցող պետական մարմնի կողմից պարտադիր

տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը, կարգը և ժամկետները հաստատելու մասին».


- «Փաստաբանների, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը, կարգը և ժամկետները հաստատելու մասին».

- «Խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը, կարգը և ժամկետները հաստատելու մասին»:

Տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպվել են փողերի լվացման և ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ սեմինար-խորհրդակցություններ, որոնց իրավիրված էին հաշվետու անձինք, այդ թվում՝ ԼՂՀ բոլոր շրջանների նոտարները, ԼՂՀ պետական ռեգիստրի և անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները, փաստաբանները և ռիելտորական գործունեություն իրականացնող անձինք, ինչպես նաև արդարադատության նախարարության և անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնատար անձինք և լրագրողները: Սեմինարների ընթացքում ներկայացվել են «Փողերի լվացման և ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ԼՂՀ օրենքը, ինչպես նաև հաշվետու անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը, կարգը և ժամկետները:

2009 թվականի փետրվար ամսից ներդրվել է հաշվետվությունների ներկայացման գործընթացը: Ընդհանուր առնամբ տարվա ընթացքում ստացվել, ուսումնասիրվել և տվյալների շտեմարան է մուտքագրվել թվով 102 հաշվետվություն, որոնք բոլորն ել վերաբերվում են պարտադիր տեղեկացման ենթակա գործարքներին: Ներկայացված հաշվետությունների բաշխումն ըստ հաշվետու անձանց տեսակների ներկայացված է գծապատկեր 2-ում:

Նոտարներ, 73



**Գծապատկեր 2. Ներկայացված հաշվետությունների քանակը ըստ հաշվետու անձանց տեսակների (հատ)**

Մշակվել և ԼՂՀ կառավարության ինտերնետային կայքում տեղադրվել են ԼՂՀ փողերի լվացման և ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի վերաբերյալ նյութեր՝

հայերեն և անգլերեն լեզուներով:

Փողերի լվացման և ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում միջազգային կառույցների հետ համագործակցության հիմքերի ձևավորման նպատակով ԼՂՀ արտաքին գործերի նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ համագործակցելով՝ ԼՂՀ ֆինանսների նախարարությունը նամակով դիմել է այս ոլորտի հեղինակավոր միջազգային կազմակերպությանը՝ ՖԱՏՖ-ին՝ ներկայացնելով ԼՂՀ փողերի լվացման և ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգը և առաջարկելով համագործակցելու ուղիները:

Շարունակվել է սերտ համագործակցություն ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ, որի շրջանակներում ԼՂՀ ֆինանսների նախարարության ֆինանսական դիտարկումների բաժնի ներկայացուցիչը մասնակցել է Երևանում կայացած՝ ԱՊՀ երկրների ֆինանսական դիտարկումների մարմինների ներկայացուցիչների համույթանը, որտեղ ներկայացրել է ԼՂՀ փողերի լվացման և ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգը և կատարված աշխատանքները:

### **Լիցենզավորման, վիճակախաղերի, խաղային գործի և քանկարժեք մետաղների ոլորտում.**

«Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ԼՂՀ կառավարության 2002 թվականի հունիսի 25-ի թիվ 128 որոշման պահանջների համաձայն՝ ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվում է «Առողջտորական ծառայությունների իրականացում», «Վիճակախաղերի կազմակերպում», «Շահումով խաղերի կազմակերպում», «Խաղատների կազմակերպում», «Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգործում և հարգադրումում» և «Թանկարժեք մետաղների գտարկում, բանկային ուլունք և ստանդարտացված ձուլակտորների արտադրություն» գործունեության տեսակների լիցենզավորում։ Նշված աշխատանքների շրջանակներում 2009 թվականի ընթացքում

– ստացվել և ուսումնասիրվել է լիցենզիա ստանալու 3 հայտ, տրամադրվել է «Վիճակախաղերի կազմակերպում» տեսակի 2 լիցենզիա և «Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգործում և հարգադրումում» տեսակի 1 լիցենզիա։

– կազմակերպվել է թանկարժեք մետաղներ հարգործողների և հարգադրումողների որակավորման քննություն, որին մասնակցել են 2 անձ։

– հավաքագրվել, ուսումնասիրվել և վերլուծվել են լիցենզավորված անձանց կողմից ներկայացված հաշվետվությունները, միջոցներ են ձեռնարկվել պետական տուրքը Ժամանակին գանձելու համար։

– ամսական և եռամսյակային տեղեկություններ են տրամադրվել ԼՂՀ արդարադատության նախարարությանը, ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությանը և ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությանը տրամադրված, կասեցված, դադարեցված լիցենզիաների և գանձված պետական տուրքի վերաբերյալ։

Մշակվել և ԼՂՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Շահումով խաղերի և խաղատների մասին» ԼՂՀ օրենքի կիրարկումն ապահովելու և ԼՂՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 26-ի թիվ 242 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը, որը ԼՂՀ կառավարության կողմից ընդունվել է 2009 թվականի մարտի 24-ին:

Մշակվել և ընդունվել է ԼՂՀ ֆինանսների նախարարի 2009 թվականի հունիսի 11-ի «Պետական մարմիններում, պետական հիմնարկներում ու կազմակերպություններում գտնվող թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և դրանցից պատրաստված իրերի հաշվառման քարտերի և գրքի ձևերը հաստատելու մասին» թիվ 60-Ն հրամանը:

ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպվել են թանկարժեք մետաղների բնագավառում առկա հիմնախնդիրների վերաբերյալ քննարկումներ, որոնց հրավիրվել են ՀՀ ֆինանսների նախարարության մասնագետներ, ԼՂՀ-ում տվյալ ոլորտում գործող խոշոր կազմակերպությունների ներկայացուցիչներ, լրագրողներ: Այդ քննարկումների ընթացքում տրվել են գործունեության ժամանակ ծագող հիմնախնդիրների լուծման վերաբերյալ պարզաբանումներ, դիտարկվել են ԼՂՀ-ում թանկարժեք մետաղների ոլորտի զարգացման հեռանկարները: Ներկայումս ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվում է օրինագիծ՝ քննարկումների ժամանակ ձևավորված առաջարկություններն իրագործելու նպատակով:

Վիճակախաղերի բնագավառում իրականացվել են վիճակախաղերի 3 կազմակերպիչների թվով 9 հասցեներում գործող կետերի ստուգումներ, որոնց արդյունքում արձանագրված խախտումների համար 2 լիցենզավորված սուբյեկտի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառվել է նախազգուշացում:

Կատարված օրենսդրական փոփոխությունների համաձայն, 2008 թվականի նոյեմբերի 4-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ֆինանսա-վարկային (այդ թվում՝ ապահովագրական, գրավատնային և արժեթղթերի) բնագավառի կազմակերպությունների լիցենզավորման իրավասությունը ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից փոխանցվեց ՀՀ կենտրոնական բանկին: Սակայն ԼՂՀ ֆինանսների նախարարությունը շարունակում է աշխատանքները ԼՂՀ-ում վերը նշված ոլորտներում կատարվող զարգացումներին հետևելու, վերլուծություններ կատարելու ուղղությամբ, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի հետ սերտ համագործակցության միջոցով մասնակցում է այդ ոլորտներում քաղաքականության իրականացման և լիցենզավորման գործընթացներին:

### **Փաստաթարգանառության, իրավաբանական ծառայության և աշխատանքների կազմակերպման ոլորտում**

2009 թվականի ընթացքում ԼՂՀ ֆինանսների նախարարությունը ստացել է 2918 փաստաթուղթ, որից 26-ը՝ քաղաքացիների դիմումներ: Բոլոր ստացված փաստաթուղթերը քննարկվել, ընթացքավորվել են և անհրաժեշտության դեպքում տրվել են պատասխաններ:

Նախարարությունը միշտ ուշադրության կենտրոնում է պահել բնակչության հետ հետադարձ կապի ապահովումը, նախարարության աշխատողները մշտական ընդունելություններ ու հանդիպումներ են իրականացրել (տարվա ընթացքում՝ ավելի քան 1000 ընդունելություն): Իրավաբանական անձանց ու քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրները լսվել և պարզաբանվել են, ձեռնարկվել են միջոցներ դրանց լուծման համար:

Հաշվետու ժամանկաշրջանում ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից ընդհանուր առմամբ մշակվել և ներկայացվել են 115 իրավական ակտերի նախագծեր, այդ թվում.

ԼՂՀ օրենքներ	- 4
ԼՂՀ Նախագահի հրամանագրեր	- 1
ԼՂՀ կառավարության որոշումներ	- 79
ԼՂՀ վարչապետի որոշումներ	- 16
ԼՂՀ ֆինանսների նախարարի հրամաններ	- 15

Ընդունվել են նաև այլ պետական մարմինների հետ համատեղ թվով 4 հրամաններ:

Ուսումնասիրվել են նախարարություններից ու գերատեսչություններից ներկայացված ԼՂՀ օրենքների, ԼՂՀ կառավարության որոշումների, այլ իրավական ակտերի և ծրագրերի նախագծերը, գնահատվել է դրանց արդյունավետությունը և համապատասխանությունը ԼՂՀ օրենսդրության պահանջներին, տրվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Նախարարության կողմից կատարված աշխատանքների թափանցիկությունը և իրապարակայնությունն ապահովելու նպատակով պարբերաբար հաղորդագրություններ են իրապարակվել մանուլում և ԼՂՀ կառավարության պաշտոնական ինտերնետային կայքում:

Կաղրային ոլորտում նախարարության կողմից կատարված աշխատանքներն ուղղված են եղել քաղաքացիական ծառայության մասին ԼՂՀ օրենսդրության պահանջների ապահովմանը, աշխատակազմի մասնագետների գիտելիքների և մասնագիտական հմտությունների բարձրացմանը: Նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայության գիսավոր, առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնելու համար տարվա ընթացքում կազմակերպվել է 9 մրցույթ: Փորձի փոխանակման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ կազմակերպվել են մասնագետների փոխադարձ այցելություններ: